

1. Փոփոխը ճՈՐԵՔԵԱԲԹԻ և ՇԱՆԱՆՈՐԵՐ ԿՐ Կրատարակուի :
2. Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մեծիս կանխիկ վճարելի, թէ մայրաքաղաքիս և իւր արտարձանաց և Թէ գաւառաց համար :
3. Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :
4. Տեղական և գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
5. Հասար մէկ դրչ. մեծիս, և կը գտնուի մասնաւորապէս Պահչէ գաւառու Սուճի Պօղոս աղայի խանութր :

Փ Ո Ւ Ն Պ

6. Ծանուցման տողը 3 դրչ. է մէկ անգամի համար : Աւելի աման կըլլայ աւելի անգամներու համար :
7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն՝ Տէր Հ. Ս. Ալաճաճեան Կ. Պօլիս Պալատը - բաղար Նափիլէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE

H. S. Adadjadjan

Directeur du Journal Armenien
POUNTCHE — 16 Nafie Han. Balouk
Bazar Constantinople.

Թիի 1494

ՇՈՒՍԹ

1880 ՅՈՒՆԻՍ 19

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Խմբագրութիւնը

Չկարծուի, թէ այս անգամ գարձեալ սոյն դերեղմանատան նողկալի ու ամեթայի վիճակին անհնախուր նկարագրութիւնը պիտի ընենք, որ գծադրարար առկալին կչարունակէ : Արդէն առաւել քան գաւառի գրած նկարագրած և ցու. յայտնած ենք մեք և այլք : Այլ այս անգամ մեր ուրախութիւնը պիտի յայտնենք. վասն զի կրնենք, թէ Ս. Պատրիարք Հայրն որ դերեղմանատանց վայելուչ ու վսեմ վիճակի վերածուելուն նախանձանիցիք է առաւել քան զմեզ, յանձնարարեր է իզմիրեան Կեր. Տ. Մատթէոս Արքայանի, որ Իւսկիւտարի Սէլամիյէ, Եէնիմահալէ և Դուզլուճուզ - Իճասիյէ թաղերէն յանձնաժողով մը կազմէ նախ յիշեալ դերեղմանատան յունական ու հրեական մասանց խնդիրները կարգադրելու, և ապա պատելու գործին ձեռնարկելու պաշտօնով : Նորին Կերպարատուութիւնը որ արդէն այս մասին բաւական աշխատած և խնդիրն ամենայն պարագայիք սերտած է, փութացաւ յանձնաժողովը կազմել ըստ յանձնարարութեանն : Չենք յուսար, որ ընտրելոյ մէջէն հրաժարողներ գտնուին, և այսպիսի կարեւորագոյն գործի մը կարգադրութեան առկալին եւս յետաճըման պատճառ ըլլան : Յանձնաժողովը թիւզ վստահ լինի, թէ ժողովուրդը պատրաստ է յօժարակամ օժանդակել ի հարկին, որպէս զի այդ դերեղմանատունը որուի մարքուի ներկայ ապահանութենէն, և իւսկիւտարի բիրաւար Հայց և ընդհանուր ազգին վրոյն անպատուութեան տրատ մը վերնայ : Արդարեւ գծուարութեանց պիտի հանդիպի յանձնաժողովը, բայց խոհեմութիւն եւ շքանայեցուցութիւն կրնան յաղթահարել ամենայն գծուարութիւն : Դժուարութիւն կայ, ըսելով, որչափ

տատանմիմք, ա՛յնչափ կառաւելուն կրարդուին և քնար կրազմագրակի :

Ժողովուրդեան մէջ հանրագիր մը կատարագրուի, աղղային ժողովին մատուցանելու և խնդրելու համար, որ աղղային ժողովը Ս. Էլմիածնի վեհ. Հայրապետին առաջարկէ՝ Կոնքու ընծայել Ս. Պատրիարք Հօր, ի պղզին փոխարինութիւն անձնուրական ջանից Նորին բարձր Սըրբաղութեան :

— Ս. Պատրիարք Հայրն այս անգամ գարձեալ Թագրիլ գրեց առ Բ. Դուռն, Բարեբղի Խօչաղբուր գիւղի քահանային ըսպանման և նորա ընտանեաց վերաւորման, ինչպէս նաեւ հարիւրապետի մ'ըրած առեւանդութեան համար, զորս գործող չարագործ անձինքն տակաւին պատժուած չեն :

— Մնցեալները Սերաստիոյ յոյներէն Միխայ անուն անձ մը տեղոյն աղղայնոց երեւելինէն Պագալեան Յարութիւն է ֆէնտիլի բաւական ինչքը դողցած ու խոյս տուած էր, և կերպարիոյ բնիկներէն վաճառական Վասիլ անուն երիտասարդ մը յիշեալ գողին եղբորը հեռագրով առեւտրական յանձնարարութիւն մ'ըրած ըլլալուն պատճառաւ իրրեւ կասկածելի բանտարկուած էր Սերաստիոյ մէջ երեք ամէն հետէ : Այս դէպքը Յունաց Ս. Պատրիարքին գրուած, և կեսաւրիոյ յոյն Մետրապօլիտն ու երեւելեաց կողմանէ բանտարկելոյն համար բարի վիայութիւն տրուած ըլլալով մեր Ս. Պատրիարքէն խնդրեր է միջնորդել յիշեալ Յարութիւն էֆէնտիլի, որ բանտարկեալն արձակել տայ : Հետեւաբար, Ս. Պատրիարք Հայրը գրեց առ Կեր. առաջնորդն Սերաստիոյ, որ ջանայ վասն ազատութեան բանտարկելոյն հըրաւիրելով Պագալեան Յարութիւն էֆէնտիլին :

— Վարնայի աղղայնոց մէջ նոր թաղական խորհրդոյ մ'ընտրութեան առթիւ անհամաձայն

նութիւն մը ծագած ըլլալով, Պատրիարքարանէն գրուեր է Բուսուզ առ Կեր. առաջնորդական տեղապահ Տ. Յովհաննէս վարդապետ Կրիկոսեան, որ վարնա երթալով օրինաւորութիւնն ու բարեկարգութիւնը հաստատէ և սահմանագրութիւնը գործադրէ ըստ բազմանաց աղղայնոց տեղեղին :

— Մասնաւոր հեռագրէ մը ցուելով կիմանամք, թէ Տ. Խրիստեան սրբազան հիւանդացած է :

— Կեր. Տ. Գարեգին վարդապետ Արուստանեանց միայն երեք ամիս պիտի մնայ ի վան, ըստ փափարանաց Տ. Խրիստեան սրբազան Հօր :

— Չմիկածաղի աղղայնոց կողմանէ 1182 զրուշ զրկուեր է ի նպատակ սովելոց, առ կեդրոնական յանձնաժողովն մեր :

— Կեր. Տ. Փիլիպպոս եպիսկոպոս որոշեր է հրաժարիլ Տիգրանակերտի առաջնորդական պաշտօնէն, նկատելով որ վիճակին ժողովուրդը դո՛հ կըլլայ Եգեսիոյ առաջնորդ Միխիլարեան Գեր. Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոսի հոլուութեան յանձնուելով :

— Կը լսեմք, թէ երուսազիմայ Միաբաններէն Տ. Երեմիա եպիսկոպոս՝ Ռուսաստան, Տ. Ներսէս եպիսկոպոս՝ Հնդկաստան, Տ. Փիլիպպոս եպիսկոպոս՝ Պարսկաստան, և Տ. Ասատուատուր եպիսկոպոս՝ Տաճկաստան հանդանակութեան պիտի ելնեն ի նպատակ բարձման պարտուց Ս. Երուսազիմայ :

Տ. Ներսէս եպիսկոպոս՝ որ թէքրտաղի առաջնորդ է, պիտի հրաժարի :

Յաջողութիւն կմաղթեմք յիշեալ Գերապատիւ Հորց համար :

— Չհաւատալով կրնեմք, թէ երեւանի նահանգէն կարօտ հայեր Ս. Էլմիածին երթալով հաց կիմողրեն, բայց դատարկ ու յուսահատ կը գառնան պատասխան ընդունելով թէ, Ս. Էլմիածնի հացը հազիւ հազ բաւական կլինի Միաբանութեան համար Ս. Էլմիածնի Սրբատ Հանդիսին անկ է պէտք եղած բա

յատրութիւնը տալ ի հերքումն այս գայթակղական զրուցին : Շատ անգամ Պօլսոյ Պատրիարքարանի համար առաջարկած ենք, որ յայտնապէս մէկը նշանակէ՝ աղղային և օտարազգի լրագրաց մէջ տեանուած սուտ ու սխալ լուրերու և գայթակղական տեղեկութեանց ու դիտողութեանց պատասխանելու համար : Նայնք այս առթիւ կառաջարկեմք Ս. Էլմիածնի հոգեւոր իշխանութեան, որ յատուկ Հանդէս մը հրատարակելուն պատճառաւ դիւրութիւն ունի քան զՊատրիարքարանն Պօլսոյ :

— Տիխիսի պատուաւոր աղղայիններէն՝ Աղա Գրիգոր Մովսէսեան Տ. Արքահամանց վախճաներ է այս օրերս՝ 1000 բուպի կտակելով տեղեղին աղղային գպրացներու համար, և դեռին մը Շամբուեցոց Ս. Աստուածածին եկեղեցոյ համար :

— Վանէն գրուած է, թէ անցեալները Տիխիսէն գարծող քանի մը հայ երիտասարդաց զէնքերն առեր է կուսակալը, պատճառելով թէ Ռուսիոյ արքունի հրացաններ են՝ զորս կըրել արդեւուած է : Տեղեղին ուսական հիւպատոսն ալ փաշայէն առեր է՝ առարկելով որ եթէ ուս արքունի հրացանք են՝ ինձ կպատկանի դրուել : Հայք զէնքերն առեր են ճանապարհի վրտանգներէ ազատ մնալու համար :

— Հաչիւ կըլլայ, թէ Ռուսիոյ աղղայնոց կողմանէ հանդանակեալ 60,000 բուպի եկած է մինչև ցարդ առ կեդրոնական յանձնաժողովն մեր, ի նպատակ սովելոց Հայաստանի :

— Ս. Էլմիածնի սեպհական գիւղորէից խնդրոյն վրայ դեռ գոհացուցիչ տեղեկութիւն մը չստացած՝ այս օրերս կիմանամք թէ Դարապաղու եկեղեցական մեծամեծ կալուածներ կորսուելու վտանգի մէջ են, հարուստ թուրք մը և տեղական կառավարութիւնը նոցա մեծագոյն մասըն դրաւելու եղած և դատ բացած ըլլալով. բայց մերայնոց

կողմանէ դարձեալ ինձանք և փոխ չտարուիր ազգային մեծափարձամ սեպհականութիւններ ձեռքէ չհանելու համար: Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանութիւնն այս մասին եւս կմեղադրուի:

— Երեւանի մէջ թատերական ներկայացում մը տրուեր է ինը պատա Միացեալ Բնկերութեանց Պօլսոյ, և զուտ հասոյթ մնացած է 250 բուսիլ:

— Սիմֆերոպօլի (Նոր-Նախ-իջեւանու Պետրապոլի վիճակ) մէջ օտար վարժարաններ ուսումնն առնող և ակտրօքիլի ձայն ունեցող հայ տղայք, որ մեծա մեծաց որդիք են, կիւրակէ օրերը օտար եկեղեցեաց մէջ սաղմոսերգութեանց կը մասնակցին, մինչդեռ տեղւոյն հայ եկեղեցին զուրկ կգանուի եղեր լաւ երգող տղայքներէ: Յիշեալ վիճակին առաջնորդ Արքիապատիւ Տ. Մակար Ս. Արքեպիսկոպոսի խորին ուշադրութեան արժանի է, եթէ ստոյգ է: Հայ մանկտին արդէն կօտարանայ օտար վարժարանայ մէջ ուսումն առնելով. եթէ կիւրակէ օրերն ալ օտար եկեղեցեաց մէջ սաղմոսերգէ, հայկական ինչ նշան կը մնայ:

— Մեծ. Պ. Ս. Երեցեանց՝ որ Ռուս-Հայաստան դացած է հրնադիտական խաղաղութեանց համար, Արմաւիրի մէջ մեծ դերեղման մը փորել տուեր և շատ հնութիւններ գտեր է, որոց մէջ կան շատ փոքրիկ ձիու դուխներ, մետաղեայ օձ մը, շատ տեսակ դրամներ, խեցիկ կտորներ եւ այլն եւ այլն, զորս գրկեր է ի Տիփսիս:

— Հեռագրական պաշտօնատունէն ազգարարութիւն եղեր է Պատրիարքարանի, որ գաւառներէն ձրի քաղաքից հեռագիրք միայն սովու վերաբերեալ ըլլան: Հայաստանի սովերոյ ինձանող յանձնաժողովոյ կողմանէ այս ազգարարութիւնը հաղորդուեր է որոց անկ է:

— Երէկ երեկոյան դէմ առինք առ մեզ ուղղեալ հետագայ հեռագիրն. — «Ամէ մը հետէ կազատեմ Պատրիարքա «բանի հրամանին իմ վրայ եղած «անհիմն գանդատանաց քննութեան համար. 15 օր եւս պիտի մնամ, և երբ դորձագրութիւն մը չտեսնեմ՝ ինքզինքս «պատասխանատու չճանաչելով, «Պօլիս պիտի գամ առ ի դարձ «ման: — Առաջնորդ Մշոյ Գրիգորիս: — 17 յուլիս:»

— Անգղիոյ խորհրդարանին մէջ, ամսոյս 11|23 ին, դարձեալ Հայաստանի բարենորոգմանց խնդիրն յուղուելով Պ. ձէյնս Պրայս վեհաժողովի հերեմիտանին մար-

դանիւթեան շորհիւ, արտաքին գործոց նախարարի խորհրդականն ըսեր է, թէ «Տերութիւնը իրենց մէջ խորհրդակցելու վրայ են Հայաստանի բարենորոգմանց համար և արդիւնքը խորհրդարանին պիտի ծանուցուի. եւրոպացի սոցիոլոգ միջոցաւ Հայաստանի մէջ քննութիւն պիտի բացուի՝ ՅԱԲ յօդուածին յիշած գաւառաց մէջ բնակող այլ և այլ ժողովրդոց թիւերուն նրկատմամբ, և ստայուելիք վիճակագրական տեղեկութիւնը ապագայ բարենորոգմանց խարտիս պիտի ըլլայ: Այժմէն կրնանք յայտարարել, թէ բոլոր օսմանեան գաւառաց համար միայն մէկ և ընդհանուր օրէնք չպիտի ընդունուի. այս ինդիքն Սրբեկեան ինդիքն այն երեք ճիւղերէն մէկն է, զոր անգղիական կառավարութիւնն իւր միայր պիտի պահէ՝ միւս երկու կէտերն եւրոպական տէրութեանց հետ բացարձակ համաձայնութեամբ գործադրած ժամանակ»: Առաջին նախարար Պ. կառքութիւն ալ յայտարարեց, թէ «Հայկական ինդիքն ամենամեծ դժուարութիւն ունեցող ինդիք մ'է, բայց իւր գծուարութեանց հակառակ՝ Անգղիոյ կառավարութեան խորին ուշադրութիւնը գրաւած է»:

— Իւսկիւտար Իճապիէի Մեղապուրեան ազգիանց զիշերօթիկ ու ցերեկեայ վարժարանի հարցաքննութիւնը աւարտած ըլլալով վաղը, 20 յուլիս, և ժամ 6, պարգեւաքաշխութեան հանդէօր պիտի կատարուի:

— Աֆղանստանի վրայ անգղիական վերջին արշաւանաց առթիւ, արեւելից խորքը՝ Քեապիլի մէջ բնակեալ Հայոց վրայ մինչև ցարդ ծանօթութիւններ տրուեցան, բայց մանրամասն և կատարեալ չէին. ուստի աւելորդ չեմք համարել, այս անգամ հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններն հրատարակել ի դիտութիւն մեր անխն ընթերցողաց:

«Ի Քեապիլ, 1838 էն հետէ, կայ հայկական եկեղեցի մը Պալահիտար կոչուած ամրոցին մէջ, ուր անցեալները սպանուեցաւ անգղիական զեապանը հանդերձ իւր պարողայնը: Ժողէֆ Վուլֆ անուն անգղիացի քարոզիչ մը, 1832 ին, յիշեալ եկեղեցոյ մէջ քարոզ կարգաց. 1879 ին Հընդկաստանի ֆէշալէր քաղաքի հովիւ՝ որ ընկի անգլան է, Իմամ Ծահ անուն, յիշեալ եկեղեցոյ մէջ քարոզ խօսեցաւ:

«Հայերը Քեապիլ տարուեցան Նասիր Ծահի ձեռք, իւր 200

ընտանիք. այժմ մնացած են և այր, 8 կին և երկու երեխայք, բնգամներ Ա. հոգի. սորա երկար ժամանակ քահանայ ունեցած չեն, և մկրտած են՝ ժամանակ առ ժամանակ այն տեղ գործով այցելութեան գայող անգղիական քարոզչաց ձեռք: 1839 ին երկու հոգի մկրտուեցան. 1842 ին՝ 3 հոգի. իսկ շատերը կերթային Հնդկաստան ֆէշալէր քաղաքի միսիոնարներէն մկրտութիւն ընդունելու համար: 1842 ին Քեապիլի Հայկական եկեղեցոյն այցելող Ալլէն անուն անգղիացի քարոզիչ մ'ալ մկրտուեց քանի մը հայեր, որոց մէկը Սարգիս Խըղր-խան դեռ կենդանի է:

«Անցեալ աշնան, երբ Իմամ Ծահ անուն քարոզիչը Քեապիլ այցելեց, հայոց մէկը ժամապատէ (+էլքա) բռնուելով մեռաւ. հանդուցեալն Ա. տարեկան առողջ պատանի մ'էր, մկրտուելու վախաք յայտնած ըլլալով՝ Իմամ Ծահ մկրտեց զանի և այլ մէկ քանին:

«Պալահիտարի Հայոց եկեղեցին 36 օտար երկարութիւն ունի և 15 օտար լայնութիւն. սրատեբուն մէջ լուսամուտներ չունի. միայն առաստաղէն բացուած երդիքէ մը լոյս կառնու. բեմը 8 օտար բարձրութիւն և 5 օտար լայնութիւն ունի. բեմին վրայ դրած են երեք հատոր Նոր կրտակարան գեղեցիկ կազմով, մետաքսեայ թաշկինակներու մէջ փաթեթած: Գատերուն մէջտեղը կայ զըքակալ մը, սորայ վրայ դրուած է ժամադիրը և ամեն օր կկարդան քնիէց: Երբեմն կը կարգացուի անգղիական եկեղեցոյ սարակերէն թարգմանած ժամադիրքն ալ: Հայերը Քեապիլ գալէն հետէ, եկեղեցոյ մէջ ոչ մի անգամ Ս. Պատարագ տեսեր և հաղորդուեր են: Զարին երկու անգամ, Քրիստոսի Ս. Ծննդեան և Յարութեան աստի օրերը, տեսակ մը Սուրբ հայ կուտեն (նշխարք), որ երուսաղիմէն կը դրկուի եղեր. Սիկհը արձաթէ շինուած ըլլալով՝ ըզգուշութեամբ պահուած է եկեղեցոյ պատին մէջ՝ աւաղակաց ձեռքը շինալու համար: Անցեալ աշնան հաղորդութեան խորհուրդը կատարելու ժամանակ, Հայր թոյլ չուին Իմամ Ծահին, որ յիշեալ Սիկհը գործածէ. բայց եթէ այն տեղ մնալու և զիրենք հովուելու խօսք տար՝ պատրաստ էին զայն իրեն յանձնել:

«Հայոց գերեզմանատունը Պալահիտարէն մէկ մղան հեզի է. ըստ պատմութեան Հայոց ժամանակաւ պարտեղ է եղեր, բայց

ապա քրիստոնեայ նահատակ մը թաղուելուն պատճառաւ գերեզմանատան վերածուեր է. սուպանաբարերուն ոմանց վրայ կը տեսնուի 1769 թուականը: 1839-էն, երբ անգղիացիք տիրեցին Քեապիլի, այդ գերեզմանատան մէջ քանի մ'անգղիացի սպայք թաղուեցան, բայց անգղիացոց մեկնեղէն յետոյ, աւաղակը բացին նոցա գերեզմանները՝ հարստութիւն գանելու յուսով:

«Քեապիլի մէջ գանուող հայերը ժամանակ մը Աֆղանստանոյ կառավարութեան բարձր պաշտօններու զուլին անցան, և բազումք պատերազմական բանակաց զօրապետ եղած են: Ի մը Աշխ Խան պատկուեցաւ հայ օրիորդի մը հետ, յորմէ ծնած է Մերտար Իշայի Խան՝ որ այժմ Սամարկանդի մէջ ուսաց բանակին հիւր եղած է: Այժմ Քեապիլի մէջ մեծ նշանակութիւն ունի տեղացի հայ բժիշկ մը: Հայ մ'ալ Էմիրին տան անգղիական լեզուի ուսուցիչն է, որ ուսումն ու կրթութիւն առած է Փէշապիլի միսիոնարական վարժարանին մէջ»:

— Երէկ մեր ազգային ժողովըն արգիւնք մը չունեցաւ. միայն 28 երեպիտանը ներկայ գտնուեցան. նախորդ երկու անգամ անհազարութիւնը վաւերացան, Մայր դիւանի նորընտիր անգամը հրաժարեցան, բաց ի Մերեէմ գուրի Էֆէնտիէ՝ որ Պրուսա կը գտնուի. Ս. Պատրիարք Հօր յանձնուեցաւ՝ հրաժարեալները հրապրել համուել: Առաջիկայ նիստը 8 օրէն պիտի ըլլայ ի Ղալաթիս:

— Զարմանօք կը լսեմք, թէ Փարիզի մէջ արուստ՝ երեկոյթ մը արգիւնքն որ ի նպատակ վերոյ յատկացեալ էր, Պօլիս դրկուեր է, սակայն Պօլսոյ մը յանձնաժողովին չորուէն՝ պահանջուելով որ Լուսինեան իշխանուէրոյ անունով անգործագիր գրուի. և այս՝ Լուսինեան մահանուը անուղակի բայց սպառնական կերպիւ վաւերացուցած ըլլալու համար, զոր չընդունիր յանձնաժողովը՝ այդ մակնորան ազգովին հաստատութիւնը ինդրոյ տակ ըլլալով պատճառաւ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Բ

Երէկ գեապանք գերմանական գեապանատան մէջ դարձեալ նիստ ընելով, Գարատաղն ինդրոյն համար Բ. Արքան սրուելիք վէճիկն ծանուցադրոյն խմբագրութեամբ դրաղեր են, Կրսուի թէ 20 օր պայմանաժամ պիտի տրուի

